Ճեայ ժամանակ մը, և վերադառնալով իր հայրենիքը, զղջումով վախճանեցաւ (Թ. Մեծոփեցի էջ 40)։

ԱԻԱԳ ԵՐԷՑ. — 1358ին Երուսաղէմի Ս. Հրեշտակապետ վանքին մէջ կ'ընդօրինակէ Աւետարան մը Գրիգոր և Սիմէոն կրօնաւորներուն համար և կը գրէ հետեւեալ յիշատակարանը. «Ցամի ութհարիւրերորդի եօթներորդի մեծ թուականին մերոյ գրեցաւ սբ. և լուսաիղձ և կենսաբեր, ածախաւս. ս. Աւետարանս ի սբ. քաղաքս Երուսաղէմ ի դրունս սբ. և փառաւորեալ տաճարիս Քրիստոսի. Ս. Հրեշտակապետաց, ձեռամբ.. տէր Աւագ երիցու. ի խնդրոյ ածարեալ. և սրբասէր կրաւնաւորացն Գրիգորի և Սիմեոնի, որ ետուն գրել զսա մեծաւ փափաքանաւք. յիշատակ Գրիգորի ծնողաց իւրոց, հաւր իւրոյ Գանձի և մաւր իւրոյ Ճոհարի և եղբարց իւրոց Կարապետի և Կարպիասի և քերցն իւրեանց Տիկնոջի, Գոհարի և Մարիաթունի և Միանայի. [յիշատակ] Սիմեոնի և ծնողաց իւրոց, հաւրն իւր Սարգսի և մաւրն իւր Քնիֆուշի և եղբաւր իւր Մարտիրոսի և այլ ամենայն...։

Արդ՝ թէպէտ որ անարհեստ էի ի գրչութիւնս... այլ հանդիպեալ լաւ և յընտիր աւրինակի որ գրած էր Ստեփանոս Գոյներիցանց, այն որ լի էր և պարարուն յարուեստ գրչութեան և ընդ բնաւս հոչակեալ, նաև բանիւ կատարեալ և հոգւով լցեալ. որպէս և յայտնի է իմաստնոց և ստոյգ դիտողաց, ի բառս, ի լծորդս, և ի բացատս և ի տրոհմունս առոգանութեանց։ Եւ ես մեղաւոր հոգս յոյժ բաղձանաւք և յոգնատոչոր տենչանաւք... երկաւք գծագրեցի զսա» (Հայիպ. Ցուց. Թ. 54)։

Բ

ԲԱՐՍԵՂ ԱԲ. ՎԱՆԵՑԻ. — (Տե՛ս էջ 49). Տէ. (1831—✻1848) Ս. Հրեշտակապետի եկեղեցիին մէջ Քրիստոսի Առաջին բանտի սեղանին մարմարեայ քանդակազարդ չորս քարերը Բարսեղ աբ. իր ծախքով շինել կուտայ հետեւեալ արձանագրութիւնով. «ՌՄՁ (= 1831) յիշատակ է այս դ. քարս սբ. Հրեշտակապետու ըէյլզ Վանցի Բարսեղ վրդ.ին.»։